

Կարծիք

Ուսուան Անոնի Մուսեյանի «Հագուստը որպէս նշանային համակարգ հայ և բրիտանական լեզվամշակութեակրում» Ժ. 02.02 -

Ըսդհանուր և համեմատական լեզվաբանություն մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական սպառհճանի հաստինան սպառհճանի հաստինան

Վերաբերյալ

Դեռևս 20-րդ դարի կեսերից լեզվաբանությունը դուրս էր եկել իր սահմաններից, և զիտական հետազոտություններում ավելի և ավելի էր կարևորվում վերջիններիս միջզիտակարգային բնույթը՝ հնարավորություն տալով երևույթները դիտել նոր տեսանկունից:

Ոուզան Մուսեյանի աշխատանքը կատարվել է ձանաշողական նշանագիտության հայեցակերպից, ինչն անշուշտ արդիական է: Աշխատանքի նպատակն է վերլուծել *հազուստ* հասկացությունը որպես նշանային համակարգի մաս հայ և բրիտանական լեզվամշակույթներում: Առաջադրված նպատակին հասնելու համար ատենախոսը փորձում է վերհանել և զուգադրել *հազուստ* նշանի ընկալումները հայ և բրիտանական լեզվամշակույթներում, ինչպես նաև զուգադրել *հազուստ* նշանակիչի բառայնացման առանձնահատկությունները և *հազուստ* նշանակյալի իմաստային դաշտը՝ կենտրոնանալով հազուստի ձանաշողական ընկալումների վրա և հայերեն և անգլերեն ԴՄ-երում դրանց առկայացման ձևերի վրա: Ատենախոսը իր աշխատանքի նորույթը հիմնավորում է այն փաստով, որ նման զուգադրական ուսումնասիրություն ձանաշողական նշանագիտության և ձանաշողական փոխարերության լույսի ներքո առաջին անգամ է իրականացվում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս զլուխներից, որոնք համապատասխանաբար բաժանված են ենթագլուխների, եզրակացությունից, զրականության ցանկից և երկու հավելվածներից:

Առաջին գլուխը ներառում է երեք ենթագլուխ և ներկայացնում է նշանի ուսումնասիրության տեսական հիմքերը: Երկրորդ գլխում, որը կազմված է երկու ենթագլուխներից, ուսումնասիրվում է *հազուստ* նշանի ռնեարումները իալ և

բրիտանական լեզվամշակույթներում: Երրորդ գլուխը, որը նույնպես կազմված է երկու ենթագլուխներից, ներկայացնում է հազուստ բաղմաստային հարացույցը հայերենում և անգլերենում: Ատենախոսության չորրորդ գլխում մանրակրկիտ վերլուծության են ենթարկվում ԴՄ-եր, որոնցում հազուստի տարբեր պարագաներ ցույց տվող բաղադրիչների միջոցով առկայանում է՝ ‘Հազուստը ինքնուրույն է կաղապարի մի շարք տեսականիշ ենթակաղապարներ, ինչպես օրինակ՝ Հազուստը մշակութային ինքնուրույն է, Հազուստը կրոնական ինքնուրույն է և այլն:

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը միանգամայն ինքնուրույն և արժեքավոր ուսումնասիրություն է: Տեղինակը պատասխանատու և մանրակրկիտ ձևով ուսումնասիրել է փաստական նյութը, ինչն անշուշտ գովելի է: Աշխատանքը գրված է պատշաճ գիտական մակարդակով և մեր կարծիքով՝ նոր խոսք է համպատասխան ոլորտում :

Այնուամենայնիվ, բնակ չցանկանալով նսեմացնել աշխատանքի արժեքն ու նշանակությունը՝ կցանկանայինք ներկայացնել մի քանի դիտարկումներ և առաջարկներ.

1. Մեր կարծիքով համեմատական լեզվաբանության տեսանկյունից աշխատանքը ավելի շահեկան կներկայանար, եթե ատենախոսը ներկայացներ հազուստը նաև որպես լեզվական ընդհանրույթ՝ ևս մեկ անգամ հիմնավորելով համեմատվող լեզուներում առկա նմանությունները, ինչպես նաև ավելի մանրամասն ներկայացնելով Սեպիր-Ուորֆի հայեցակարգը, որը հիշատակվում է աշխատանքի էջ 22-ում :
2. Ատենախոսը իր աշխատանքի երկրորդ գլխի ենթագլուխներից մեկը նվիրել է դաշվածքը որպես ինքնուրյան նշան ուսումնասիրելուն՝ նշելով, որ դաշվածքը և պիրսինզը համարվում են մարմնի զարդարանք: Կցանկանայինք, որպեսզի ատենախոսը հիմնավորի դաշվածքի նախընտրությունը պիրսինզի նկատմամբ և մանրամասնի դաշվածքի կապը “հազուս” նշանի հետ, քանի որ այն, մեր կարծիքով, այդքան էլ կապ չունի մի կողմից հազուստի՝ որպես նշանային համակարգի հետ, մյուս կողմից՝ չորրորդ գլխում քննարկվող ԴՄ-երի հետ:

Նման մոտեցման պարագայում շպարը նույնպես կարելի է համարել մարմնի զարդարանք:

3. Կցանկանայինք ատենախոսը պարզաբաներ արդյոք կարող ենք “շռուրում”, “սմարթ քեժուալ”, “պալացո տարատ” և նման մի շարք այլ բառեր (եջ 98-105) համարել հայերենում օգտագործվող փոխառություններ:

Նշված կետերը ամենին չեն նսեմացնում ատենախոսության արժեքը, և Ռուզան
Լևոնի Մուսեյանի «Հազուստը որպես նշանային համակարգ հայ և բրիտանական
լեզվամշակույթներում» ատենախոսությունը համապատասխանում է
թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ
հոդվածներն ու սեղմագիրը արտացոլում են վերջինիս հիմնական
բովանդակությունը: Ասվածը հիմք է տալիս ինձ միջնորդել գիտական աստիճան
շնորհող մասնագիտական խորհրդի առջև Ռուզան Լևոնի Մուսեյանին շնորհելու
հայցվող աստիճանը Ժ. 02.02. – (Ըսդհանուր և համեմատական լեզվաբանություն)
մասնագիտության գծով:

Բ. Ա. Հարությունյան

P.Q.P. 1996/1

Հաստատում եմ բ.գ.թ. դոցենտ

Ք. Ա. Հարությունյանի ստորագրությունը

ԵՊՀ գիտքարտուղար

Մ. Հովհաննիսյան

